

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 2014 թ.**

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 2014 թ.

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

10 12 14  
110/4215-14

2014 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզում բացահայտվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 1716 երեխաներ: Նրանցից 9-ը առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ են, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք՝ 15, 723-ը՝ միակողմանի ծնողազուրկներ են, 397-ը՝ հաշմանդամություն ունեցողներ, 43-ը՝ առանձնահատուկ կրթության կարիք ունեցողներ: Տարվա ընթացքում վկայագրվել են 27 երեխաներ, ովքեր սովորում են հատուկ գիշերօթիկ դպրոցներում: Գնահատվել են 368 երեխաների սոցիալիոգեքանական կարիքները, 107-ի համար մշակվել են անհատական վերականգնողական ծրագրեր, 80-ի մասին տվյալները մուտքագրվել են «Նորք» տեղեկատվական համակարգ: Բացահայտվել է կրթությունից դուրս մնացած և առանձնահատուկ կրթության կարիք ունեցող 12 երեխա, ովքեր առողջական ծանր խնդիրների պատճառով չեն կարող հաճախել դպրոց: Աշխատանքներ են տարվում նրանց առողջական և կրթական խնդիրների լուծման ուղղությամբ: Նրանցից 4-ի առանձնահատուկ կրթության կարիքը վկայագրվել է, 2015 թ. նրանք կընդգրկվեն ներառական կրթության մեջ: Ոստիկանությունում հաշվառվել են 10 իրավախախտ անչափահասներ, որոնց նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից նշանակվել են հասարակական դաստիարակներ: ՀՀ 2 քաղաքացի հաշվառվել է որպես որդեգրողի թեկնածու:

Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի կանխարգելման, եղած կարծրատիպերի հաղթահարման նպատակով ՀՀ ԱՍՀ նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից մշակված հարցաթերթով Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի ծնողների շրջանում անցկացվել է երեխայի հանդեպ բռնության վերաբերյալ անանուն հետազոտություն, տարվել են բացատրական աշխատանքներ: Աուտիզմի միջազգային օրվա կապակցությամբ հանդիպում է կազմակերպվել աուտիզմով հիվանդ երեխաների ծնողների, հանրապետության ճանաչված մասնագետների հետ:

Տրվել է եզրակացություն 1 երեխայի՝ մանկատանը, 6 երեխայի՝ խնամքի և աջակցության կենտրոններում տեղավորվելու, իսկ 5-ին՝ կենսաբանական ընտանիք վերադարձնելու համար:

Ընդհանուր իրավասության դատարանին է տրամադրվել 6 եզրակացություն ամուսնալուծության պատճառով երեխաների խնամքն ու դաստիարակությունը ծնողներից մեկին հանձնելու վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնակցությունը երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ հարցեր քննարկող դատական և խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովների նիստերին:

Այս ժամանակահատվածում բացահայտվել են ծննդյան վկայական չունեցող 6 երեխաներ, ովքեր մասնագիտական անհրաժեշտ խորհրդատվության և

համապատասխան կառույցների հետ համագործակցության արդյունքում ստացել են ծննդյան վկայականներ՝ ժամկետի բացթողումով:

Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ մարզի համայնքներում և մարզպետարանում կազմակերպվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 1200 երեխաների աջակցության ծրագրեր: Մարզի 20 համայնքներում իրականացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մշտադիտարկում, բաժանվել են մեթոդական 25 նյութեր:

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ընտանիքներում բռնության կանխարգելման թեմաներով կազմակերպվել են 54 հանդիպումներ, կլոր սեղաններ, դպրոցներում բաց դասեր կանանց իրավունքների վերաբերյալ իրավական ակտերի ներկայացում, նախագծերի քննարկումներ: Բռնության ենթարկված 3 կանայք իրենց երեխաների հետ տեղավորվել են աջակցության կենտրոններում:


Երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով բաժնի աշխատակիցները մասնակցել են կյանքի դժվար իրավիճակում գտնվող 22 դեպքերի քննարկումների: Այդ հարցերում համագործակցել ենք «Վորդ Վիժն»-ի Թալինի և Ապարանի գրասենյակների, «Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» ՀԿ-ների հետ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի N356 որոշման համաձայն մշակվել և մարզպետի կողմից հաստատվել է ընտանիքի տարվա կապակցությամբ իրականացվելիք մարզային միջոցառումների ծրագիրը: Արագածոտնի մարզի համայնքներում կազմակերպվել են «Հայկական ավանդական հարսանիք» խորագրով տոնական միջոցառումներ: Ընտանիքի տարվան նվիրված մարզային ծրագրի շրջանակներում մարզպետի կողմից նյութական աջակցություն են ստացել 35 բազմազավակ, բնակարանային խնդիրներ ունեցող ունեցող 4 ընտանիքներ: Հասարակական, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ մեծարվել են հեղինակություն վայելող 27 ընտանիքներ, 7 ընտանիքներում նշվել է ոսկե հարսանիք:

Տարբեր միջազգային, տեղական ՀԿ-ների հետ համագործակցության արդյունքում նյութական աջակցություն են ստացել 850 երեխաներ և նրանց ընտանիքները: Մարզում այս տարի երեխաների աջակցության և կանխարգելման ծրագրեր են իրականացրել «Վորդ Վիժն Ինթերնեշնլ» , ՀՕՄ, «Օրբան» , Շողիկ, Լայթհաուս Հայաստան, «Մանուկների հիմնադրամ» , Ապարան-Արարատ կազմակերպությունները:

Բաժնում մուտք է եղել 293 գրություն և դիմում, 172 պատասխան գրություններ են ուղարկվել կատարված աշխատանքների վերաբերյալ:

**Ընտանիքի, կանանց և երեխաների  
իրավունքների պաշտպանության բաժնի պետ**



**Գ. Դանիելյան**